№ 8 (12)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2021

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

8 (12)

ԵՐԵՎԱՆ 2021
ЕРЕВАН 2021
YEREVAN 2021

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №8 (12). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2021. – 242 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

ХУДОЖЕСТВЕННЫЙ ТЕКСТ КАК СРЕДСТВО РАЗВИТИЯ СОЦИОКУЛЬТУРНОЙ КОМПЕТЕНЦИИ СТАРШЕКЛАССНИКОВ

Элен Самвеловна Аветисян
avetisyan.elen@inbox.ru

Преподаватель английского языка базовой гимназии при Армянском государственном педагогическом университете имени Хачатура Абовяна, Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье подчеркивается идея о том, что чтение английской художественной литературы направлено на развитие знаний о стране изучаемого языка, ее истории, духовных ценностях, культурных традициях, менталитете носителей языка, об их национальных особенностях, манерах, обычаях, а также знаний об их коммуникативном поведении, о вербальных и не вербальных языковых средствах. Также отмечается, что при отборе художественных текстов для образовательных целей необходимо принимать во внимание национально-маркированную, культурно-маркированную лексику в художественном тексте. Один из важных принципов при отборе текстов – изучать тексты, содержащие лексику социально-культурного характера, что ценно с точки зрения современного разговорного английского языка. Более того, изучение лексики, которая необходима не только для понимания текста, но и для его представления, может быть приоритетом. Учащиеся в основном осваивают социально-культурную лексику не на уровне запоминания, а на уровнях распознавания, анализа, сравнения.

Ключевые слова: художественный текст, менталитет, мультикультурная компетенция, экстенсивное чтение, межкуль-

турная компетенция, коммуникативное поведение, вербальные средства, невербальные средства, прецедентный текст, контекст.

Գեղարվեստական տեքստի ընթերցանությունը զարգացնում է ոչ միայն սովորողների հաղորդակցական կարողությունները, հմտությունները, այլև նպաստում է նրանց հանրամշակութային կոմպետենցայիի ձևավորմանն ու զարգացմանը: Գեղարվեստական գրականությունը ներկայացնում է լեզվակիրների մշակույթը, պատմությունը, կենսագործունեության տարբեր ոլորտները, արժեքային դիրքորոշումները, կարծրատիպերը, ավանդույթներն ու սովորույթները: Ակնհայտ է, որ ամեն մի գրական երկ յուրովի է ներկայացնում տվյալ ժողովրդի լեզվամտածողությունը, մտածելակերպը, հանրամշակութային իրողությունները: Ուսուցողական նպատակներով գեղարվեստական տեքստն ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել տարբեր գործոններ՝ թե՛ ուսումնական, թե՛ արտաուսումնական: Նրա ընտրության խնդիրն ավելի է բարդանում, երբ դա արվում է օտար լեզու սովորելու նպատակով: Ուսուցիչը կամ դասագրքի հեղինակը պետք է հաշվի առնի սովորողների լեզվական մակարդակը, մայրենի լեզվով գեղարվեստական գրականությունը ընթերցելու, ուսումնասիրելու փորձը, սովորողների տարիքը, նրանց արժեքային դիրքորոշումները, ճանաչողական դրդապատճառները, հետաքրքրությունների ուղղվածությունը, ինչպես նաև տվյալ բնագրի ստեղծման ժամանակը, նրանում արտացոլված խնդիրները, հերոսների աշխարհայացքը, նրա մատչելիությունը, հեղինակի մտահղացման փիլիսոփայական և հոգեբանական նախադրյալները և այլն:

«Ընթերցանությունը խոսքային գործունեության ընկալողական տեսակ է, որն ուղղված է գրաֆիկորեն ֆիքսված իմաստի ընկյալմանը» [3: 167]: Ավագ դպրոցում սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից արդյունավետ է անգլերենի ուսուցման բոլոր փուլերում հատկապես էքստենսիվ ընթերցանությունը, որը «ներա-

ռում է սովորողների կողմից երկար տեքստերի ընթերցանությունը դրանցից բավականություն ստանալու նպատակով [12, 14, 19]:

Այսօր կան ընթերցանության տեսակների բազմաթիվ դասակարգումներ: Նրանք կարող են դասակարգվել ըստ տեքստի ընկալման հոգեբանական բնութագրերի. վերլուծական և սինթետիկ [2, 18], ըստ դրա իրականացման պայմանների՝ պատրաստված և հանպատրաստից [2, 7], ըստ տեքստի մեջ ներթափանցման խորության՝ ինտենսիվ և էքստենսիվ [8, 11, 16], ըստ ընթերցման ձևի՝ բարձրաձայն և լուռ [10], ըստ նպատակային դիրքորոշումների՝ հետազոտական, դիտողական, ծանուցման և որոնողական [6], ըստ ըմբռնման մակարդակների. հասկանալ հիմնական բովանդակությունը, տեքստից ամբողջական տեղեկատվություն քաղել, հասկանալ անհրաժեշտ իմաստալից տեղեկատվությունը [9]:

Հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման գործընթացը շարունակական բնույթ ունի, և դրան նպաստում են այն բնագրերը, որոնք ներառում են տեղեկատվություն լեզվակիրների կենսագործունեության տարբեր դրսևորումների մասին: Շատ դեպքերում էքստենսիվ ընթերցանությունը համարվում է աշխատատար: Երբեմն ժամանակը չի բավարարում բնագրի ամբողջական վերլուծության համար: Երբեմն դպրոցական ծրագրերում էքստենսիվ ընթերցանության պահանջին հավուր պատշաճի չեն անդրադառնում: Հատկանշական է այն, որ օտարալեզու բնագրերի ընթերցանության կազմակերպման ընթացքում խնդիր չի դրվում վերլուծել դրանք հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից:

Մեթոդիստները դեռևս նախորդ դարի կեսերից փորձում են հասկանալ, թե ինչու են ուսուցիչները հնարավորինս խուսափում հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման հիմնախնդրից [20]:

Որոշ հեղինակներ ուսումնասիրում են հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման հիմնախնդիրը բազմամշակութային և միջմշակութային կոմպետենցիաների համատեքստում [13]: Հատ-

կապես կարևորվում են այն աշխատանքները, որոնք վերաբերում են մշակույթի ուսուցման հանրամշակութային հայեցակերպին:

Առանձնահատուկ նշանակություն ունեն հանրամշակութային պայմաններին վերաբերող աշխատանքները:

Հանրամշակութային կոմպետենցիան կարող է իրականացվել չորս բաղադրիչով, որոնք անհատին կապում են շրջակա միջավայրի հետ.

1) նախաձեռնությունը,
2) պատասխանատվությունը,
3) մասնակցությունը գործունեության մեջ որպես իրադարձություն,
4) անհատականությունը [22]:

Անգլերեն գեղարվեստական բնագրերի ընթերցանությունը պետք է միտված լինի սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացմանը, որը ենթադրում է «1) հանրամշակութային գիտելիքներ, որոնք ներառում են գիտելիքներ տվյալ երկրի, նրա պատմության, հոգևոր արժեքների, մշակութային ավանդույթների, լեզվակիրների մենթալիտետի, ազգային առանձնահատկությունների մասին, 2) շփման փորձ, որն իր հերթին ենթադրում է լեզվակիրների հետ շփման ոճի ճիշտ ընտրության մասին, 3) անձնային մոտեցում օտարալեզու մշակույթի և նրա բաղադրիչների նկատմամբ, այդ թվում հանրամշակութային կոնֆլիկտների լուծման կարողություն շփման ընթացքում, 4) լեզվակիրների հետ շփման ընթացքում լեզվական միջոցների տիրապետում, որը ներառում է հանրային նշույթավորված լեզվական միջոցների ճիշտ կիրառում, ինչպես նաև համարժեքորեն համեմատել մայրենի և օտար լեզուները, գտնել ընդհանրությունները և տարբերությունները» [1]:

Օտար լեզուների ուսուցման գործընթացում հանրամշակութային բաղադրիչը ենթադրում է գիտելիքներ ուսումնասիրվող լեզուն ներկայացնող երկրի իրակությունների, բարքերի, ավանդույթների, սովորույթների, ինչպես նաև լեզվակիրների հաղորդակցական վարքագծի, խոսքա-

յին և ոչ խոսքային միջոցների մասին: Շատ դեպքերում անգամ ուսուցիչները չեն կարողանում ճանաչել հանրամշակութային իրողություններն ընթերցվող տեքստում: Դրանք կարող են լինել լեզվակիրների հաղորդակցական վարքագիծը բնութագրող գեղարվեստական տեքստերը, երկխոսությունները, բանաստեղծությունները, երգերը, գրավոր խոսքը, հարցազրույցը և այլն:

Գեղարվեստական բնագրերի ընտրության տեսանկյունից կարևոր է հաշվի առնել տվյալ ստեղծագործության բովանդակությունը, ուղղվածությունը, նրանում արծածվող թեմաները, բառապաշարի առանձնահատկությունները և այլն: Երբեմն գեղարվեստական բնագրում ներկայացվում են տարբեր մշակույթների առճակատման, երկխոսության հատվածներ: Օրինակ՝ Վ. Սարոյանի ստեղծագործություններում համապարփակ ներկայացված է ամերիկյան կյանքի հիմնապաստառը, տարբեր ազգերի և ժողովուրդների ներկայացուցիչների հոգեբանությունը, մենթալիտետը, նոր պայմաններում հարմարվելու ունակությունները, նրանց ամերիկացի դառնալու գործընթացը: Բոլոր կերպարները իրական են, չնայած իռացիոնալ տարրը երբեմն գերակշռում է: Արծածվում են համամարդկային՝ աղքատության, դժվարություններով հարստացման, ինքնությունը չկորցնելու կամ վերագտնելու, սեփական ավանդույթները և սովորույթները պահպանելու, ամերիկյան երազանքին հասնելու խնդիրները: Ասվածը հաստատող տիպական օրինակ է նրա «Իմ սիրտը լեռներում է» ստեղծագործությունը [23]: Կարևոր խնդիր է տվյալ ստեղծագործությունում տեղի ունեցող դեպքերի ժամանակահատվածը, տեղը, կոլորիտը: Գլխավոր հերոսը՝ Մեք-Գրեգորն անընդհատ կրկնում է, որ ինքը շոտլանդական լեռներից է: Հետո նա մի քանի տեղանուն է նշում, որոնք Ամերիկայում են գտնվում՝ «Վերմոնտ», «Ուայթ Րիվը», «Սան Բենիտո փողոց»: Ընթերցողը պետք է հաղթահարի հանրամշակութային բնույթի մի շարք դժվարություններ: Օրինակ, հերոսներից մեկը ցանկանում է, որ նվագեն «Կենացս խմիր քո աչքերով» երգը: Հայ ընթեցողին այդ երգի վերնագիրը

ոչինչ չի ասում: Հանրամշակութային նշանակություն ունեն պիեսի գործող անձանց բնութագրող տարաբնույթ ակնարկները՝ (“allusion”)[1] «Մեք-Գրեգոր-/Շեքսպիրյան ոճով/, Ջոնիի հայրը – /Արիստոկրատական մեծաշքությամբ/, կամ /Իսկը Նապոլեորնը/: Նախադեպային տեքստերը կամ ներտեքստերը[2] վերցրած են Շեքսպիրից, որոնք հիմնականում ակնարկ են, հանրամշակութային իրակություն: Մի կողմից, Մեք-Գրեգորի վերջին խոսքերը, որոնք վերցրած են Շեքսպիրի ողբերգություններից, հասկանալի են ցանկացած ընթերցողի՝ լեզվակիր, ոչ լեզվակիր: Սակայն, երբ Մեք-Գրեգորը ողբերգորեն հառաչում է.

«Ավերեք տեղը: Փոքրիկ շները հաչում են վրաս,
Թրեն, Բլանշը և Անուշակը: Տեսե՛ք՝ հաչում են»[3]:

Այդ ժամանակ ընթերցող դժվարությամբ է կռահում, թե դրանք ինչ անվանումներ են՝ շների, թե մարդկանց: Մեք-Գրեգորին Ջոնիի հայրն անվանում է շեքսպիրյան ամենամեծ դերասան: Ակնհայտ է, որ դերասանի մասին պատկերացումները տարբեր ժամանակներում փոխվում են, և շեքսպիրյան դերասանները լինելով շրջիկ, լրիվ այլ պատկերացումներ ունեին ազատության, հարստության, հոգևոր և նյութական արժեքների մասին: Ինչպես և Շեքսպիրի շատ ողբերգություններում, գլխավոր հերոսն արարի վերջում մահանում է: Այն նույնպես ներտեքստային ակ-

[1] Ակնարկ /ոճական բանադարձում/

[2] Ներտեքստ (ֆր. intertexte, m.) – մի տեքստի հարաբերակցությունը մեկ այլ տեքստի հետ, տեքստերի երխոսական փոխազդեցություն, որն ապահովում է հեղինակի մտահղացման կեպափոխումը: Գեղարվեստական տեքստի տեսակ և կառուցման եղանակ մոդերնիզմի և պոստմոդերնիզմի արվեստում, որի էությունն այն է, որ տեքստը կառուցվում է այլ տեքստերից վերցրած մեջբերումներից և վերապրումից կամ հիշողություններից (լատ. Reminiscentia «հիշողություն»):

Հիշողությունը (լատիներեն reminiscentia «հիշողություն») գեղարվեստական համակարգի տարր է, որը բաղկացած է նույն (կամ նմանատիպ) թեմայով ընդհանուր կառուցվածքի, առանձին տարրերի կամ մոտիվների օգտագործումից: Վերապրումի հիմնական մեթոդներից է ակնարկը և հետահայեցումը: Վերպարումն անուղղակի մեջբերում է, մեջբերում՝ առանց չակերտների:

[3] Նույն տեղում՝ էջ 40:

նարկ է, որը բովանդակությամբ հանրամշակութային արժեք ունի: Այն հնարավոր է հասկանալ, երբ հասկանում ես լեզվակիրների մտածելակերպը տվյալ ժամանակաշրջանում: Միայն այդպես հնարավոր է հասկանալ բազում պատմամշակութային, հանրամշակութային իրողություններ և իրակություններ:

Ակնհայտ է, որ նախորդ դարի 20–30-ական թվականներին տեղի ունեցող իրադարձությունները լիովին չեն արտացոլում ժամանակակից ամերիկացու մենթալիտետը: Ըստ այդմ, նպատակահարմար է ընթերցել նաև ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ: Փոխվում են տեղանունները, գովազդային վահանակների բովանդակությունը, խանութների և հանրախանութների ցուցափեղկերը, ճանապարհային երթեվեկության նշանները, բանկային համակարգից օգտվելու կանոնները, տեխնիկական, հաղորդակցական, հեռահաղորդակցական եղանակներն ու միջոցները:

Ընդհանոր առմամբ, սովորողներն էքստենսիվ ընթերցանության միջոցով պատկերացում են կազմում ուսումնասիրվող երկիրը ներկայացնող գեղարվեստական մշակույթի, արվեստի մասին: Սխալ է այն մտայնությունը, որ անգլիական գրականությունն ավելի լավ է ներկայացնում անգլիացիների ազգային մշակույթը, քան ամերիկյան մշակույթը: Գաղտնի չէ, որ Մեծ Բրիտանիան նույնքան բազմազգ ու բազմամշակույթ է, ինչքան ԱՄՆ-ը: Դրա հետ մեկտեղ, անգլալեզու երկրները ներկայացնող ցանկացած գեղարվեստական գործ կարող է լուրջ ուսուցողական արժեք ներկայացնել հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից:

Այդ առումով կարևորվում է բացահայտել տվյալ գեղարվեստական բնագրում ազգային նշույթավորված և մշակութային-նշույթավորված բառապաշարը: Համապատասխան բառային միավորների ուսումնասիրությունը դժվար աշխատանք է պահանջում, քանի որ այսպես կոչված անհամարժեք բառապաշարը հիմնականում չի թարգմանվում, երբեմն դժվա-

րությամբ է մեկնաբանվում, կարող է լինել դիպվածային կամ նորաբանություն։

«Ցանկացած գեղարվեստական ստեղծագործություն գրված օտար լեզվով հագեցված է մշակութային-նշույթավորված բառապաշարով, որի միջոցով հնարավոր է ներկայացնել հեղինակի կողմից տվյալ երկրի կենցաղի, ավանդույթների ազգային բնութագիրը։ Այդ խոսքերով, այդպիսի բառապաշարն արտահայտում է ուսումնասիրվող հասարակության ազգային բաղադրիչները [4]։

Ազգային-մշակութային բաղադրիչ ունեցող բառերի հետագա ուսումնասիրությունը հանգեցրեց լեզվաբանության մեջ այնպիսի տերմինների ի հայտ գալուն և լայն կիրառմանը, ինչպիսիք են՝ «էկզոտիզմ, բարբարոսություն, վարվառիզմ /օտարածին բառ/, քսենիզմ /ատելություն օտարածին բառերի նկատմամբ/, մշակութային բաղադրիչ ունեցող բառ, բառապաշարային լակունա, լոկազիմ /միայն կոնկրետ տեղանքում օգտագործվող բառ/, էթնոգրաֆիզմ /կոնկրետ էթնոսի կողմից օգտագործվող բառ/, ռեգիոնալիզմ /կոնկրտե տարածաշրջանում գործածավող բառ/» որոնցից յուրաքանչյուրը, այս կամ այն չափով, կապված է օտարալեզու հասարակության մշակութային առանձնահատկությունների արտացոլման հետ» [4]։

Հանրամշակութային կոմպետենցիայի կարևոր բաղադրիչներ են նաև, ըստ Փիթեր Նյումարկի, մշակույթը, էկոլոգիան, ավանդույթները, ժեստերը, սովորույթները ներկայացնող բառային միավորները [17]։ Դեվիթ Կատանը, ինչպես նշում է նույն Տրեգուբովան, ընդլայնում է նշված բաղադրիչների ցանկը։ Նա հանրամշակութային կոմպետենցիայի բաղադրիչներ է համարում «շրջակա միջավայրը (եղանակը, սնունդը, բանակատեղին և այլն), վարքագիծը (ողջյունելու ձևը, հրաժեշտը տալու ընթացակարգերը), շփման ռազմավարությունները (ներառյալ ոչ խոսքային տարրերը), հասարակական արժեքները, հավատալիքները և այլն» [15]. Ցիտ. ըստ՝ [4]։

Բավականին հաջողված է Գ.Դ. Տոմախինի թեմատիկ դասակարգումը, ըստ որի ազգային-մշակութային բառապաշարը կարող է լինել էթնոգրաֆիկ, աշխարհագրական, հասարակական-քաղաքական, ինչպես նաև մշակութային կյանքի իրույթները [5]:

Հանրամշակութային գիտելիքները տարբեր բաղադրիչների շուրջ կարելի է իրականացնել տարբեր նպատակներ հետապնդող աշխատանք: Սովորողները հիմնականում յուրացնում է հանրամշակութային ուղղվածության և բովանդակության բառապաշարը ոչ թե մտապահման, այլ ճանաչելու, վերլուծելու, համեմատելու մակարդակներում: Օրինակ՝ սովորողները կարող են ճանաչել և առանձնացնել ընթերցվող ստեղծագործության մեջ սնունդ և խմիչք նշանակող բառերն ու արտահայտությունները: Օրինակ՝ ճանաչելով և վերլուծել Cheeseburger, Sprite, Dr. Peppers, Jell-O, doughnuts բառերը, փորձելով ներկայացնել դրանք համարժեքները, դրանց համն ու հոտը, կիրարկման դաշտերը, հնարավոր զուգորդումները և այլն: Արդյունավետ է երբեմն տալ նոր բառերի ծագումնաբանությունը, որը վերցվում է համացանցից: Օրինակ՝

Jell-O is ***a variety of gelatin desserts (fruit-flavored gels), puddings, and no-bake cream pies.*** *The original Jell-O gelatin dessert (genericized as jello) is the signature of the brand. Jell-O is a registered trademark of Kraft Heinz and is based in Chicago, Illinois. The original gelatin dessert began in Le Roy, New York, in 1897 after Pearle Bixby Wait and wife May trademarked the name for a product made from strawberry, raspberry, orange, or lemon or lime flavoring added to sugar and granulated gelatin, which had been patented in 1845. The dessert was especially popular in the first half of the 20th century.*

Համացանցային հայերեն տարբերակում դոնդողի ծագումը անգլերեն տարբերակին չի համապատասխանում.

Դոնդող (ֆր.՝ gelée), **մակարդված հեղուկ, սննդային կոլոիդային խառնուրդ** (հիմնականում **մրգային հիմքով),** որին ավելացնում են սննդային ժելատին (պեկտինյան նյութեր, ագար-ագար), սառչելիս ամբողջ զանգվածը դառնում է դոնդողանման զանգված: Դոնդողը պատրաստվում է

նաև տավարի ոտքերի և գլխի եփվածքի մրուրից: Քաղցր դոնդողն անվանում են ֆր.՝ gelée՝ ի տարբերություն մսայինի, որն անվանում են ֆր.՝ l'aspic (աղճատված ձևով՝ լանշպիգ), իսկ դրանցով ծածկված ուտեստը՝ դոնդողավոր ուտեստ կամ դոնդող: Մրգերից և հատապտուղներից պատրաստված դոնդողը, որոնք պարունակում են շատ պեկտինյան նյութեր, կարելի է ստանալ նույնիսկ առանց դրանց վրա ժելատին ավելացնելու, քանի որ պեկտինյան նյութերն իրենք էլ օշարակին դոնդողային կազմություն են տալիս: Հաճախ այդպիսիք պատրաստվում են տնային անտոնովկա տեսակի թթվահամ խնձորներից, հետո դրանք սպանախի օգնությամբ ստանում են կանաչ, իսկ որդան կարմիրի օգնությամբ՝ կարմիր գույն (*https://hy.wikipedia.org/wiki/Դոնդող*):

Կարելի է իրականացնել նախագիծ, երբ սովորողների մի մասը ընթերցվող տեքստից դուրս է գրում հագուստի և այլ աքսեսուարների անվանումները, մյուս խումբը դուրս է գրում ծխախոտների, երբեմն թմրադեղերի, ոգելից և ոչ ալկոհոլային, զովացուցիչ խմիչքների անվանումները: Երրորդ խումբն առանձնացնում է դեղամիջոցները, որոնք շրջանառվում են տեքստում: Կարելի է համապատասխան աշխատանք տանել հասարակական-քաղաքական իրույթների ճանաչման, մեկնաբանման շուրջ: Չնայած ավագ դպրոցում հատկապես տղաները բավականին լավ իրազեկված են ավտոմեքենաներից, շատ նոր մեքենաների մակնիշը կարող են հետաքրքել սովորողներին՝ Lincoln, Mustang, Jaguar, MAZDA RX~7, Pickups, Chevrolet: Դրանց տեքստը և որակական հատկանիշները փոխվում են տարբեր ժամանակներում և սովորողները կարող են այդ մասին քննարկում անել: Օրինակ՝ ուսուցիչը կարող է հարցնել, թե նախորդ դարի երեսունականներին ԱՄՆ-ում ինչ ավտոմեքենաներ էին հիմնականում գործածվում: Նույնը վերաբերում է ռազմական, իրավաբանական, քաղաքական իրույթներին: Նույն ռազմական կոչումները, եթե անգամ հայերենի հետ համընկնում են, ապա բովանդակությամբ դրանք տարբերվում են: Դա վերաբերում է և՛ լետենանտի, թե՛ կապիտանի, թե՛

անգամ գեներալի կոչումներին։ Շատ դեպքերում իրույթների ուսումնասիրությունը նպաստում է լրիվ այլ ոլորտային իրողությունները հասկանալուն։ Օրինակ՝ ուսուցիչը ներմուծում է *Federal Witness Protection Program* հասկացությունը։ Դրա բացատրությունը հնարավորություն է ընձեռում է հետաքրքիր քննարկում ծավալել, քանի որ այդ ծրագիրը[4] ՀՀ-ում չի կիրառվում։

Դետեկտիվ գրականության ընթերցումն օգնում է ուսումնասիրել իրապահ համակարգում, հանցագործ աշխարհում գործածվող բազում բառեր և արտահայտություններ, որոնք երբեմն հայերեն թարգմանել հնարավոր չէ՝ *the feds, the FBI, fibbies, Memphis PD, the cops, Deputy director, 911, Mafia։*

Սովորողները հիմնականում ավելի արագ են ճանաչում աշխարհագրական տեղանունները, գրական անվանումները, մարդկանց անուններ, հուշարձանները, ընդհանուր առմամբ տեսարժան վայրերը։ Արդյունավետ է կոնկրետ ներկայացնել աշխարհագրական անվանումը, ծագումը, դրա կիրառման նպատակը տվյալ տեքստում։

Բավականին լուրջ դժվարություն են ներկայացնում հոգևոր կյանքի իրույթները։ Թվում է, թե ամերիկյան ֆիլմեր մշտապես դիտող սերունդը հեշտությամբ է տարբերակում մշակույթը, կրթությունը, արվեստը ներկայացնող հասկացությունները։ Սակայն շատ դեպքերում անհրաժեշտ է լուրջ մասնագիտական միջամտություն կամ օգնություն։ Սովորողները դժվարությամբ են կռահում հատկապես սպորտային թիմերի, մարմնամարզիկների անունները, որոնք մեծ տարածում ունեն անգլալեզու երկրներում։ Լեզվակիրները միանգամից հասկանում են, որ *LSU TIGERS, Memphis State Tigers* հասկացությունները վերաբերում են սպորտին։ Դրանք

[4] The United States Federal Witness Protection Program (WPP), also known as the Witness Security Program or WITSEC, is a **witness protection program** codified through 18 U.S. Code § 3521 and administered by the United States Department of Justice and operated by the United States Marshals Service that is designed to protect threatened witnesses before, during, and after a trial.

հայտնի թիմեր են: Կարելի է գտնել համապատասխան հոդվածներ այդ թիմերի մասին:

Սովորողները սկսում են անկեղծորեն ներկայացնել իրենց խնդիրները, երբ ընթերցանության ընթացքում առնչվում են իրենց հոգեհարազատ կոնկրետ կերպարների հետ: Ճիշտ ընտրած գեղարվեստական բնագիրը ճշգրտորեն կարող է արտացոլել լեզվակիրների կենսակերպը, մտածելակերպը, ընկղմել սովորողներին իրենց ինչ-որ տեղ անծանոթ խոսույթի մեջ, մղել յուրահատուկ երկխոսության: Այդ երկխոսությունը կարող է լինել հատկապես այն ժամանակ, երբ ընթերցվող բնագրի հերոսները պատանի են կամ դեռահաս, ընդ որում իրենց ժամանակակից: Սովորողները մասնակցելով վերլուծական, համեմատական տարրեր պարունակող քննարկումներին, կարողանում են բացահայտել իրենց սեփական զգացմունքները, համոզմունքները: Գրականությունը նաև հնարավորություն է տալիս սովորողներին վերլուծել ուսումնասիրվող կերպարների հույզերն ու շարժառիթները, աշխարհայացքը: Արդյունավետ է, երբ վերլուծվում է նրանց խոսքը քերականության տեսանկյունից:

Եզրակացություն

Այսպիսով, ավագ դպրոցում բնագրերի ընթերցանությունը հնարավորություն է տալիս սովորողներին ուսումնասիրել լեզվակիրների մշակույթը, պատմությունը, կենսագործունեության տարբեր ոլորտները, արժեքային դիրքորոշումները, կարծրատիպերը, ավանդույթներն ու սովորույթները, առօրյա կյանքի, կրոնական պատկերացումները, հավատալիքները և համոզմունքները, ժամանցի ձևերը և այլն: Նրանք կարողանում են արժեվորել և վերարժեվորել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ազգային խտրկանության դրսևորումները, կարծրատիպեր, ինքնության պահպանման ձևերը, սոցիալական նորմերը, նախապաշարմունքները, վերաբերմունքն անարդարության նկատմամբ, անհանդուրժողականության դրսևորումները, հասարակության բեվեռացումը և այլն:

Անգլերեն գեղարվեստական բնագրերի ընթերցանությունը միտված է սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի՝ ուսումնասիրվող լեզուն ներկայացնող տվյալ երկրի, նրա պատմության, հոգևոր արժեքների, մշակութային ավանդույթների, լեզվակիրների մենթալիտետի, ազգային առանձնահատկությունների, բարքերի, սովորույթների, ինչպես նաև լեզվակիրների հաղորդակցական վարքագծի, խոսքային և ոչ խոսքային, հանրային նշույթավորված լեզվական միջոցների մասին գիտելիքների զարգացմանը։

Ուսուցողական նպատակներով գեղարվեստական տեքստեր ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել գեղարվեստական բնագրում առկա ազգային նշույթավորված և մշակութային-նշույթավորված բառապաշարը։ Կարևոր սկզբունք է տեքստեր ընտրելիս ուսումնասիրության առարկա դարձնել այն տեքստերը, որոնցում առկա հանրամշակութային բնույթի բառապաշարը, որն արժեք է ներկայացնում ժամանակակից խոսակցական անգլերենի տեսանկյունից։ Ընդ որում, առաջնային կարող է լինել այն բառապաշարի ուսումնասիրությունը, որն անհրաժեշտ է ոչ միայն տեքստը հասկանալու, այլև այն ներկայացնելու համար։

Սովորողները հիմնականում յուրացնում է հանրամշակութային ուղղվածության և բովանդակության բառապաշարը ոչ թե մտապահման, այլ ճանաչելու, վերլուծելու, համեմատելու մակարդակներում։

ЛИТЕРАТУРА

1. *Азимов Э.Г., Щукин А.Н.* Словарь методических терминов. – СПб.: Златоуст, 1999. – 472 с.
2. *Калистра И.Д.* Чтение с предварительно снятыми трудностями понимания. // Вопросы обучению устной речи и чтению на иностранном языке, 2003. – №4. – СС. 23–28.
3. *Колесникова И.Л.* Англо-русский терминологический справочник по методике преподавания иностранных языков / И.Л. Колесникова, О.А. Долгина – СПб.: Русско-Балтийский информационный центр БЛИЦ, Cambridge Uni-

versity Press, 2001. – 224 с.
4. *Трегубова Ю.А.* Национально-маркированная лексика в современной американской художественной литературе: особенности и возможности перевода на русский язык // Научный результат. Вопросы теоретической и прикладной лингвистики, 2020. – Т. 6. – №1. – СС. 108–118 [Электронный ресурс]. – Режим доступа: http://rrlinguistics.ru/journal/article/2015/ (Дата обращения: 08.09.2021г.).
5. *Томахин Г.Д.* Безэквивалентная лексика (реалии) как источник страноведческой информации // Лингвострановедческий аспект в преподавании русского языка как иностранного. – Воронеж, 1984. – СС. 148–151.
6. *Фоломкина С.К.* Обучение чтению на иностранном языке в неязыковом вузе: учебно-методическое пособие / С.К. Фоломкина; науч. ред. Н.И. Гез. – 2-е изд-е, испр. – М.: Высшая школа, 2005. – 253 с.
7. *Baker L.* (1984). Spontaneous versus instructed use of multiple standards for evaluating comprehension: Effects of age, reading proficiency, and type of standard. Journal of Experimental Child Psychology, 38(2). – PP. 289–311.
8. *Beers K. & Probst R.* (2012). Notice and Note: Strategies for Close Reading. Portsmouth, NH: Heinneman.
9. *Cain K., Oakhill J.V. & Lemmon K.* (2004). Individual differences in the inference of word mean ings from context: The influence of reading comprehension, vocabulary knowledge, and memory capacity. Journal of Educational Psychology, 96(4). – PP. 671–681.
10. *Coltheart M., Curtis B., Atkins P., & Haller M.* (1993). Models of reading aloud: Dual-route and parallel-distributed-processing approaches. Psychological Review, 100(4). – PP. 589–608.
11. *Day R.* (2015). Extending Extensive Reading. Reading in a Foreign Language, 27 (2). – PP. 294–301.
12. *Barnett M.A.* (1988). Reading through context: How real and perceived strategy use affects L2 comprehension. The Modern language Journal, 72. – PP. 150–162.
13. *Cohen A.D. & Olshtain E.* (1981). Developing a measure of sociocultural competence: the case of apology. MI: Language Learning Research Club, University of Michigan.
14. *Day R.R. & Bamford J.* (1998) 'Extensive Reading in the Second Language Classroom' Cambridge: CUP.
15. *Katan D.* Translating Cultures. An Introduction for Translators, Interpreters and Mediators. – Manchester: St. Jerome, 1999. – 380 p.
16. *Mart C.T.* (2015). Combining Extensive and Intensive Reading to Reinforce Lan-

guage Learning. Journal of Educational and Instructional Studies in the World, 5(4). – PP. 85–90 [Electronic resource]. – URL: https://www.researchgate.net/profile/Cagri_Mart/publication/329268348 (Accessed: 08.09.2021).
17. *Newmark P.A* Textbook of Translation. – London/New York: Prentice Hall, 1988. – 292 p.
18. *Saito Y., Horwitz E.K. & Garza T.J.* (1999). Foreign language reading anxiety. The Modern Language Journal, 83(2). – PP. 202–218.
19. *Susser B. & Robb T.N.* (1990) 'EFL Extensive Reading Instruction: Research and Procedure' JALT Journal, Vol. 2 [Electronic resource]. – URL: http://www.kyoto-su.ac.jp/~trobb/sussrobb.html (Accessed: 08.09.2021).
20. *Trigger B.* (1998). Sociocultural Evoliution: Calculation and Contingency. London: Basil Blacwell Publishers.
21. *William Peter Grabe, Fredricka L. Stoller* Teaching and Researching: Reading: Edition 2nd. – 2011. 2013. – London. – 344 p.
22. *Zarifian* (2005). The Structure of Socio-Cultural Competence (Self) Development. [Electronic resource]. – URL: https://www.researchgate.net/publication/287110748_The_Structure_Of_Socio-Cultural_Competence_Self_Development (Accessed: 08.09.2021).
23. *Սարոյան Վ.* Ընտիր երկեր: 4 հատորով: – Եր., Սովետ. գրող, 1987: – Հ. 2. Պիեսներ, թարգմ.՝ Խ.Դաշտենց, Զ. Բոյաջյան և ուրիշ. – 1987. – 400 էջ:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՈՐՊԵՍ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Է.Ս. Ավետիսյան
avetisyan.elen@inbox.ru

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնական գիմնազիայի անգլերենի ուսուցչուհի, Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ընդգծվում է այն գաղափարը, որ անգլիական գեղարվեստական գրականության ընթերցումն ուղղված է ուսումնասիրվող լեզվի՝ երկրի, նրա պատմության, հոգևոր արժեքների, մշակութային ավանդույթների, լեզվի կրողների աշխարհայացքի, նրանց ազգային առանձնահատկությունների, սովորույթների, ինչպես նաև հաղորդակցական վարքագծի, բանավոր և ոչ բանավոր լեզվական միջոցների մասին գիտելիքների զարգացմանը: Նշվում է, որ գեղարվեստական տեքստերի ընտրության ժամանակ՝ կրթական նպատակների համար անհրաժեշտ է հաշվի առնել, թե ինչպիսին է տեքստում ազգա-մշակութային կողմնորոշված բառապաշարը: Տեքստերի ընտրության կարևոր սկզբունքներից մեկը՝ սոցիալ-մշակութային բնույթի բառապաշար պարունակող տեքստերն ուսումնասիրելն է, ինչն արժեքավոր է ժամանակակից խոսակցական անգլերենի տեսանկյունից: Ավելին, բառապաշարի ուսումնասիրությունը, որն անհրաժեշտ է ոչ միայն տեքստը հասկանալու համար, այլև այն ներկայացնելու, կարող է լինել առաջնահերթ: Ուսանողները սոցիալ-մշակութային բառապաշարը հիմնականում սովորում են ոչ թե հիշողության, այլ ճանաչման, վերլուծության, համեմատության մակարդակներով:

Բանալի բառեր՝ գեղարվեստական տեքստ, մտածելակերպ, հանրամշակութային կոմպետենցիա, էքստենսիվ ընթերցանություն, միջմշակութային կոմպետենցիա, հաղորդակցական վարքագիծ, խոսքային միջոց, ոչ խոսքային միջոց, նախադեպային տեքստ, ներտեքստ:

THE FICTIONAL TEXT AS A MEANS OF DEVELOPING THE SOCIO-CULTURAL COMPETENCE OF HIGH SCHOOL STUDENTS

E. Avetisyan
avetisyan.elen@inbox.ru

English language teacher at the base High-School College,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article emphasizes the idea that reading English fictional text is aimed at developing knowledge about the country of the target language, its history, spiritual values, cultural traditions, the mentality of native speakers, about their national characteristics, manners, customs, as well as knowledge about their communicative behavior, knowledge of verbal and non-verbal language means. It is also noted that in the selection of fictional texts for educational purposes, it is necessary to take into account the nationally-marked, culturally-marked vocabulary in the fictional text. One of the important principles when selecting texts is to study vocabulary of a multicultural nature, which is valuable from the point of view of modern spoken English. Moreover, learning vocabulary, which is necessary not only for understanding the text, but also for its presentation, can be a priority. Students mainly master the socio-cultural vocabulary not at the memorization level, but at the levels of recognition, analysis, comparison.

Keywords: literary text, mentality, multicultural competence, extensive reading, intercultural competence, communicative behavior, verbal means, non-verbal means, precedented text, context.

Информация о статье:
статья поступила в редакцию 23 сентября 2021 г.,
подписана к печати в номер 8 (12) / 2021 – 29.11.2021 г.